ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/53

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ի լիազորված ներկայացուցիչներ՝

Վ. Ալեքսանյանի (լիազորագիր՝ տրված 31.05.2021թ.),

Ա. Մուրադյանի (լիազորագիր՝ տրված 11.02.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2022թ. թիվ 26/26-1/2027-2022 գրությամբ «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2022թ. թիվ ՊՆ/02/441-2022 գրության հիման վրա, 07.02.2022թ. թիվ 26/26-1/2027-2022 գրությամբ նախաձեռնել է Հայրենասերների ռազմավարական

հետազոտություններ» ՀԿ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/53 ընթացակարգի շրջանակներում 11.02.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

Ընկերության ներկայացուցիչը մասնավորապես հայտնել է, որ Պատվիրատուի կողմից պայմանագիրը լուծվել է ոչ իրավաչափ՝ տրամադրելով Ընկերության կողմից 25.11.2021թ. Պատվիրատուին ուղղված գրությունը և ի պատասխան՝ Պատվիրատուի 09.12.2021թ. թիվ 4378 գրությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.05.2022թ. թիվ ՊՆ/02/441-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ի միջև 10.09.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-4/10-1 ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.01.2022թ. միակողմանի մասնակի լուծել է ԳՀԱՊՁԲ-21-4/10-1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2022թ. հրապարկվել է www.procurment.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/53 ընթացակարգի շրջանակներում 11.02.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/53 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/53 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ի միջև 10.09.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-4/10-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:
2. Պայմանագրին կից հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով 25 անվանում ապրանքների ձեռքբերման համար մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. ըստ եռամսյակների, 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 01.12.2021թ.:
3. «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ն 25.11.2021թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«26.10.2021թ. կազմվել է արձանագրություն 9 առ այն, որ մատակարարված գեներատորը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին) Г288Е3701000 և թվով 12 հատ /G273B1-03 վերադարձվել են: КЗАТЭ գործարանի ապրանքային նշանն է և հեղինակային իրավունքով այս կատալոգային համարը պատկանում է իրեն: Մինչդեռ մեր կողմից նշված էր արտադրող ԱՎՏՈՄԱԳՆԱՏ, որի արտադրանքը համապատասխանում է ՀՀ Գնումների մասին օրենքին որպես համարժեք, իսկ հատուկ ապրանքային նշանի վրա հղումը անթույատրելի է: По генератору:

Генератор 50А КАМАЗ Дв.740, МАЗ дв. ЯМЗ 236, 238, Урал 2-руч., с интегральным реле "АВТОМАТНАТ" / G273B1-03 (АМ) (28В/50А) (КАМАЗ, МАЗ, УРАЛ дв. ЯМЗ-236, 238,

КАМАЗ- 740 28В 50А КЗАТЭ (ЗиТ)) аналогичен Генератор МАЗ, КРАЗ, УРАЛ дв. ЯМЗ-236, 238 28В 47А (замена для Г288Е) КЗАТЭ (Зит) Г288Е3701000ГЧ

Նույն բանը կատարվել է նաև կարդանային լիսեռի մասով 5320-2205015 կոդ է նշված և մենք մատակարարել ենք համարժեք 5320-2205011 կոդով ապրանքը և առանց արձանագրություն կազմելու հետ ենք վերցրել արդեն երկրորդ չափաբաժնով մատակարարման ժամանակ նոյեմբերին:

Технические характеристики:

Особенности исполнения:

- применение телескопической трубы для защиты шлицевой от ударов и воздействия абразивных частиц,
- применение полимерного покрытия шлицевой типа RILSAN,
- отсутствие пресс-маслёнки (тавотницы) для смазки шлицевой в связи с отсутствием необходимости проведения её технического обслуживания (благодаря применению покрытия RILSAN),
- крепление крестовин в вилках (сварной и скользящей) стопорными кольцами вместо пластин и болтов,
- увеличение крутящего момента вследствие применения усиленной трубы;

минимальная длина карданного вала (Lmin) = 983 mm, рабочий ход = 136 mm

применяемые крестовины-53205-2201025-10, 53205-2201025-11 (крепление стопорными кольцами),

наружный диаметр подшипника (D) = 50 mm, диаметр шипа крестовины (d) = 33,62 mm

расстояние по торцам подшипников (H) = 135 mm. расстояние по торцам шипов (h) = 123 mm

применяемый фланец - 5320-2205023 -10 (гладкий, "квадратный", под стопорные кольца),

присоединение фланца - 4 отверстия (d)=16,1 mm, диаметр по центрам

противоположных отверстий (D1) = 140 mm, диаметр буртика (D2) = 95 mm, высота

буртика (h) = 2,5 mm, обод (D) = 170 mm, A=110 mm

крутящий момент до деформации (Мд) = 9800 Nm,

крутящий момент до разрушения (Мр) = 11000 Nm,

внутренний диаметр трубы и толщина стенки (dxS) = 82x4 mm,

максимальный угол поворота шарнира a1=a2=25°

масса карданного вала (М) = 33,2

Предыдущая модификация: 5320-2205011 -03 (снята с производства) с худшими параметрами

Ցանկանում ենք տեղեկացնել, որ գնման առարկաների մեջ առկա են ևս բազմաթիվ ապրանքներ որտեղ միևնույն ապրանքը նշված է երկու տողով և հղում է կատարվում կոնկրետ արտադրողին: Խնդրում ենք հրավիրել մեզ բանակցությունների և կիրառել պայմանագրի 8.6 կետը, այն է երկարացնել մատակարարման ժամկետը»:

4. Ի պատասխան վերը նշված գրության՝ Պատվիրատուն 09.12.2021թ. թիվ ՆՏԱ/4378 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 25.11.2021թ. գրության տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/10-1 առ 10.09.2021թ. պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները մնում են անփոփոխ, քանի որ պատասխանատու ստորաբաժանման (ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱՏ ծառայություն) կողմից մատակարարման ժամկետների փոփոխությունը՝ տարեվերջի ժամկետների սղության պատճառով գտնվել է ոչ իրատեսական:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով ամրագրված կատալոգային կոդերից և արտադրողներից տարբերվող կոդերով և արտադրողների անվանումներով ապրանքներ մատակարարելու վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ապրանքների ամբողջական նկարագրերը ներառվել են, համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 50-րդ կետի պահանջների, ընտրված մասնակցի՝ «Հայրենասերների Ռազմավարական Հետազոտություններ» ՀԿ-ի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի»:

5. 22.12.2021թ. Գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 366 եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը.

«Պայմանագրի շրջանակներում կատարողը չի մատակարարել հետևյալ ապրանքատեսակները՝

Ապրանքների						
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Նշումներ ուշացման մասին
		ըստ պայմանագրով հատատված գնման ժամանակացույցի մատակարարման ենթակա	փաստացի մատակարարված	ըստ պայմանագրով հատատված գնման ժամանակացույցի	փաստացի	
շարժիչի մխոց	740.1004015	26	8	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	18 հատը չի մատակարարվել	18 հատը՝ 15 աշխ. օր
բոցամուղ հավաքական	33.1112010	16	8	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	8 հատը չի մատակարարվել	8 հատը՝ 15 աշխ. օր
Հովացման համակարգի հիդրոկցորդիչ	21-405	7	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	7 հատը չի մատակարարվել	7 հատը՝ 15 աշխ. օր
Գործարկիչ	5402.3708000-01	11	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	11 հատը չի մատակարարվել	11 հատը՝ 15 աշխ. օր
Գեներատոր	4001.3771-53	11	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	11 հատը չի մատակարարվել	11 հատը՝ 15 աշխ. օր
բոցամուղի փոշեցիր	33.1112110-12K	60	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	60 հատը չի մատակարարվել	60 հատը՝ 15 աշխ. օր
կարդանային լիսեռ	5320-2205015	2	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	2 հատը չի մատակարարվել	2 հատը՝ 15 աշխ. օր
հովացուցիչ	5323-1301010	6	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	6 հատը չի մատակարարվել	6 հատը՝ 15 աշխ. օր
կցորդման համակարգի պնևմոհիդրոուժեղարար	5320-1609510	15	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	15 հատը չի մատակարարվել	15 հատը՝ 15 աշխ. օր
տարվող սկավառակ	14.1601130	20	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	20 հատը չի մատակարարվել	20 հատը՝ 15 աշխ. օր
մեկնարկիչ	AZF4554AE	10	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	10 հատը չի մատակարարվել	10 հատը՝ 15 աշխ. օր
գեներատոր	Г288Е-3701000	12	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	12 հատը չի մատակարարվել	12 հատը՝ 15 աշխ. օր
					20 հատը չի	
Հովացման համակարգի ջրի մղիչ հավաքական	740.1307010-11	20	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ	մատակարարվել	20 հատը՝ 15 աշխ. օր
Արգելակման կոճղակների մակադրակ	375-3501105 -10	50	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	50 հատը չի մատակարարվել	50 հատը՝ 15 աշխ. օր
Արգելակման կոճղակների մակադրակ	55571-3501105-10	50	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	50 հատը չի մատակարարվել	50 հատը՝ 15 աշխ. օր
Ղեկի ուժեղարարի մեխանիզմ (շտոկ)	5557Я2-3405012-10	6	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	6 հատը չի մատակարարվել	6 հատը՝ 15 աշխ. օր
Ղեկային մեխանիզմ հավաքական ծողով	375-3400022-01	5	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	5 հատը չի մատակարարվել	5 հատը՝ 15 աշխ. օր
ուժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով	43203510010	2[illegible]	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան [illegible]	20 հատը չի մատակարարվել	20 հատը՝ 15 աշխ. օր

Ուշացման օրերի հաշվարկը կատարվել է 2021թ. դեկտեմբերի 22-ի դրությամբ: Համաձայն պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի՝ վաճառողի կողմից ապրանքի մատակարարման ժամկետները 2021թ. դեկտեմբերի 21-ի դրությամբ խախտվել են 10 օրից ավելի, ինչը պայմանագրի էական խախտում է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն»:

6. Պատվիրատուն «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ին ուղղված 25.01.2022թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀԿ-ի միջև 10.09.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/10-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ, քան 01.12.2021թ., պետք է մատակարարեր թվով 25 անվանատողերով նախատեսված ապրանքներ, որոնցից 2 անվանատողերով նախատեսված ապրանքները՝ 26 հատ շարժիչի մխոցից 18 հատը և 16 հատ բոցամուղ հավաքականից 8 հատը չի մատակարարվել, իսկ 7 հատ հովացման համակարգի հիդրոկցորդիչը, 11 հատ գործարկիչը, 11 հատ գեներատորը, 60 հատ բոցամուղի փոշեցիրը, 2 հատ կարդանային լիսեռը, 6 հատ հովացուցիչը, 15 հատ կցորդման համակարգի պնևմոհիդրոուժեղարարը, 20 հատ տարվող սկավառակը, 10 հատ մեկնարկիչը, 12 հատ գեներատորը, 20 հատ հովացման համակարգի ջրի մղիչ հավաքականը, 50 հատ արգելակման կոճղակների մակադրակը, 50 հատ արգելակման կոճղակների մակադրակը, 6 հատ ղեկի ուժեղարարի մեխանիզմը (շտոկ), 5 հատ ղեկային մեխանիզմ հավաքական ձողովը և 20 հատ ուժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանովը չի մատակարարվել ընդհանրապես:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 24-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

(...)»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 25.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2022թ. թիվ 26/26-1/2027-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2022թ. թիվ ՊՆ/02/441-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ընկերության կողմից ընթացակարգի քննության ընթացքում հայտնած դիրքորոշումը և ներկայացված փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ի միջև 10.09.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-4/10-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով 25 անվանում ապրանքների ձեռքբերման համար մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. ըստ եռամսյակների, 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 01.12.2021թ.:

«Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ն 25.11.2021թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«26.10.2021թ. կազմվել է արձանագրություն 9 առ այն, որ մատակարարված գեներատորը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին) Г288Е3701000 և թվով 12 հատ /G273B1-03 վերադարձվել են: ԿՅԱՏԷ գործարանի ապրանքային նշանն է և հեղինակային իրավունքով այս կատալոգային համարը պատկանում է իրեն: Մինչդեռ մեր կողմից նշված էր արտադրող ԱՎՏՈՄԱԳՆԱՏ, որի արտադրանքը համապատասխանում է ՀՀ Գնումների մասին օրենքին որպես համարժեք, իսկ հատուկ ապրանքային նշանի վրա հղումը անթույատրելի է: По генератору:

Генератор 50А КАМАЗ Дв.740, МАЗ дв. ЯМЗ 236, 238, Урал 2-руч., с интегральным реле "АВТОМАТНАТ" / G273B1-03 (АМ) (28В/50А) (КАМАЗ, МАЗ, УРАЛ дв. ЯМЗ-236, 238, КАМАЗ- 740 28В 50А КЗАТЭ (ЗиТ)) аналогичен Генератор МАЗ, КРАЗ, УРАЛ дв. ЯМЗ-236, 238 28В 47А (замена для Г288Е) КЗАТЭ (Зит) Г288Е3701000ГЧ

Նույն բանը կատարվել է նաև կարդանային լիսեռի մասով 5320-2205015 կոդ է նշված և մենք մատակարարել ենք համարժեք 5320-2205011 կոդով ապրանքը և առանց արձանագրություն կազմելու հետ ենք վերցրել արդեն երկրորդ չափաբաժնով մատակարարման ժամանակ նոյեմբերին:

Технические характеристики:

Особенности исполнения:

- применение телескопической трубы для защиты шлицевой от ударов и воздействия абразивных частиц,
- применение полимерного покрытия шлицевой типа RILSAN,
- отсутствие пресс-маслёнки (тавотницы) для смазки шлицевой в связи с отсутствием необходимости проведения её технического обслуживания (благодаря применению покрытия RILSAN),
- крепление крестовин в вилках (сварной и скользящей) стопорными кольцами вместо пластин и болтов,
- увеличение крутящего момента вследствие применения усиленной трубы;

минимальная длина карданного вала (Lmin) = 983 mm, рабочий ход = 136 mm

применяемые крестовины-53205-2201025-10, 53205-2201025-11 (крепление стопорными кольцами),

наружный диаметр подшипника (D) = 50 mm, диаметр шипа крестовины (d) = 33,62 mm

расстояние по торцам подшипников (H) = 135 mm. расстояние по торцам шипов (h) = 123 mm

применяемый фланец - 5320-2205023 -10 (гладкий, "квадратный", под стопорные кольца),

присоединение фланца - 4 отверстия (d)=16,1 mm, диаметр по центрам

противоположных отверстий (D1) = 140 mm, диаметр буртика (D2) = 95 mm, высота

буртика (h) = 2,5 mm, обод (D) = 170 mm, A=110 mm

крутящий момент до деформации (Мд) = 9800 Nm,

крутящий момент до разрушения (Мр) = 11000 Nm,

внутренний диаметр трубы и толщина стенки (dxS) = 82x4 mm,

максимальный угол поворота шарнира a1=a2=25°

масса карданного вала (M) = 33,2

Предыдущая модификация: 5320-2205011 -03 (снята с производства) с худшими параметрами

Ցանկանում ենք տեղեկացնել, որ գնման առարկաների մեջ առկա են ևս բազմաթիվ ապրանքներ որտեղ միևնույն ապրանքը նշված է երկու տողով և հղում է կատարվում կոնկրետ արտադրողին: Խնդրում ենք հրավիրել մեզ բանակցությունների և կիրառել պայմանագրի 8.6 կետը, այն է երկարացնել մատակարարման ժամկետը»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ Պատվիրատուն 09.12.2021թ. թիվ ՆՏԱ/4378 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 25.11.2021թ. գրության տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/10-1 առ 10.09.2021թ. պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները մնում են անփոփոխ, քանի որ պատասխանատու ստորաբաժանման (ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱՏ ծառայություն) կողմից մատակարարման ժամկետների փոփոխությունը՝ տարեվերջի ժամկետների սղության պատճառով գտնվել է ոչ իրատեսական:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով ամրագրված կատալոգային կոդերից և արտադրողներից տարբերվող կոդերով և արտադրողների անվանումներով ապրանքներ մատակարարելու վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ապրանքների ամբողջական նկարագրերը ներառվել են, համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 50-րդ կետի պահանջների, ընտրված մասնակցի՝ «Հայրենասերների Ռազմավարական Հետազոտություններ» ՀԿ-ի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի»:

22.12.2021թ. Գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 366 եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը.

«Պայմանագրի շրջանակներում կատարողը չի մատակարարել հետևյալ ապրանքատեսակները՝

Ապրանքների						Նշումներ ուշացման մասին
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		
		ըստ պայմանագրով հատատված գնման ժամանակացույցի մատակարարման ենթակա	փաստացի մատակարարված	ըստ պայմանագրով հատատված գնման ժամանակացույցի	փաստացի	
շարժիչի մխոց	740.1004015	26	8	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	18 հատը չի մատակարարվել	18 հատը՝ 15 աշխ. օր
բոցամուղ հավաքական	33.1112010	16	8	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	8 հատը չի մատակարարվել	8 հատը՝ 15 աշխ. օր
Հովացման համակարգի հիդրոկցորդիչ	21-405	7	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	7 հատը չի մատակարարվել	7 հատը՝ 15 աշխ. օր
Գործարկիչ	5402.3708000-01	11	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	11 հատը չի մատակարարվել	11 հատը՝ 15 աշխ. օր
Գեներատոր	4001.3771-53	11	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	11 հատը չի մատակարարվել	11 հատը՝ 15 աշխ. օր
բոցամուղի փոշեցիր	33.1112110-12K	60	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	60 հատը չի մատակարարվել	60 հատը՝ 15 աշխ. օր
կարդանային լիսեռ	5320-2205015	2	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	2 հատը չի մատակարարվել	2 հատը՝ 15 աշխ. օր
հովացուցիչ	5323-1301010	6	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	6 հատը չի մատակարարվել	6 հատը՝ 15 աշխ. օր
կցորդման համակարգի պնևմոհիդրոուժեղարար	5320-1609510	15	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	15 հատը չի մատակարարվել	15 հատը՝ 15 աշխ. օր
տարվող սկավառակ	14.1601130	20	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	20 հատը չի մատակարարվել	20 հատը՝ 15 աշխ. օր
մեկնարկիչ	AZF4554AE	10	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	10 հատը չի մատակարարվել	10 հատը՝ 15 աշխ. օր
գեներատոր	Г288Е-3701000	12	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	12 հատը չի մատակարարվել	12 հատը՝ 15 աշխ. օր
					20 հատը չի	
Հովացման համակարգի ջրի մղիչ հավաքական	740.1307010-11	20	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ	մատակարարվել	20 հատը՝ 15 աշխ. օր
Արգելակման կոճղակների մակադրակ	375-3501105 -10	50	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	50 հատը չի մատակարարվել	50 հատը՝ 15 աշխ. օր
Արգելակման կոճղակների մակադրակ	55571-3501105-10	50	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	50 հատը չի մատակարարվել	50 հատը՝ 15 աշխ. օր
Ղեկի ուժեղարարի մեխանիզմ (շտոկ)	5557Я2-3405012-10	6	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	6 հատը չի մատակարարվել	6 հատը՝ 15 աշխ. օր
Ղեկային մեխանիզմ հավաքական ծողով	375-3400022-01	5	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 01.12.2021	5 հատը չի մատակարարվել	5 հատը՝ 15 աշխ. օր
ուժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով	43203510010	2[illegible]	-	2021թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան [illegible]	20 հատը չի մատակարարվել	20 հատը՝ 15 աշխ. օր

Ուշացման օրերի հաշվարկը կատարվել է 2021թ. դեկտեմբերի 22-ի դրությամբ: Համաձայն պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի՝ վաճառողի կողմից ապրանքի

մատակարարման ժամկետները 2021թ. դեկտեմբերի 21-ի դրությամբ խախտվել են 10 օրից ավելի, ինչը պայմանագրի էական խախտում է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն»:

Պատվիրատուն «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ին ուղղված 25.01.2022թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀԿ-ի միջև 10.09.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/10-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ, քան 01.12.2021թ., պետք է մատակարարեր թվով 25 անվանատողերով նախատեսված ապրանքներ, որոնցից 2 անվանատողերով նախատեսված ապրանքները՝ 26 հատ շարժիչի մխոցից 18 հատը և 16 հատ բոցամուղ հավաքականից 8 հատը չի մատակարարվել, իսկ 7 հատ հովացման համակարգի հիդրոկցորդիչը, 11 հատ գործարկիչը, 11 հատ գեներատորը, 60 հատ բոցամուղի փոշեցիրը, 2 հատ կարդանային լիսեռը, 6 հատ հովացուցիչը, 15 հատ կցորդման համակարգի պնևմոհիդրոուժեղարարը, 20 հատ տարվող սկավառակը, 10 հատ մեկնարկիչը, 12 հատ գեներատորը, 20 հատ հովացման համակարգի ջրի մղիչ հավաքականը, 50 հատ արգելակման կոճղակների մակադրակը, 50 հատ արգելակման կոճղակների մակադրակը, 6 հատ ղեկի ուժեղարարի մեխանիզմը (շտոկ), 5 հատ ղեկային մեխանիզմ հավաքական ձողովը և 20 հատ ուժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանովը չի մատակարարվել ընդհանրապես:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 24-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

(...)»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 25.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10</u> օրից ավելի:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 10.09.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2022թ. թիվ 26/26-1/2027-2022 գրությամբ «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հայրենասերների ռազմավարական հետազոտություններ» ՀԿ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**